Ամփոփ նյութ

«ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ
01/04/2021 N 1/175Ա

«ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասի 1-ին և 2-րդ կետերում նկարագրված խախտումները թույլ տալու համար Կազմակերպության նկատմամբ կիրառել **տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ** գումարի չափով, ինչպես նաև **նախազգուշացում՝** 1-ին կետում նկարագրված խախտումները մինչև 31.12.2021 թ. վերացնելու (կապված՝ 16.08.2019 թ.- ից հետո վաղաժամկետ մարված վարկերի գծով ավել վճարված գումարները վարկառուներին վերադարձնելու հետ), իսկ 2-րդ կետում նկարագրված խախտումները՝ մեկամսյա ժամկետում վերացնելու և ապագայում նման խախտումները կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով:
2. Սույն որոշման 3-րդ կետում նկարագրված խախտումը թույլ տալու համար Կազմակերպության նկատմամբ կիրառել **տուգանք՝ 100 000 (հարյուր հազար) դրամ գումարի չափով,** ինչպես նաև **նախազգուշացում՝** ապագայում նման խախտումները կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կազմակերպություն մուտքագրվելու կամ վերջինիս՝ սահմանած կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումն օրենսդրությամբ սահմանված կարգով երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՏԵՂԱԿԱԼ ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑՅԱՆ